



**ԱՐՄՍՎԻՍԲԱՆԿ**

ՓՐԱՅՎԻԹ & ԻՆՎԵՍՏԱԸՆԹ ԲԵՆԲԻՆԳ

*ՀԱՎԵԼ ՎԱԾ*

Հաստատված է նոր խմբագրությամբ՝

«ԱՐՄՍՎԻՍԲԱՆԿ» ՓԲԸ Խորհրդի՝  
02.02.2018թ.-ի թիվ 09-2018-1-Լ որոշմամբ

Ուժի մեջ է՝ 02.02.2018թ.-ից


**«ԱՐՄՍՎԻՍԲԱՆԿ»**

**ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ**

**ԲԱՆԿԻ ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻՆ ՎԱՐԿԵՐԻ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ**


**Կ Ա Ր Գ**

2018թ.

 <b>ԱՐՄԱՎԻՍԲԱՆԿ</b> ՓՐԱՅՎԻԹ & ԻՆՎԵՍՏԱՆԸ ԲԵՆԹԻՆԳ	<b>Բանկի աշխատակիցներին վարկերի տրամադրման կարգ</b>		
	Տարբերակ՝ 8.0	Կարգավիճակը՝ հաստատված	Ամսաթիվ՝ 02.02.2018թ.


### ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

1.	ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ .....	3
2.	ԲՆԱԿԱՐԱՆ ՁԵՌՔ ԲԵՐԵԼՈՒ ՀԱՄԱՐ ՏՐԱՄԱԴՐՎՈՂ ՎԱՐԿԵՐ .....	
3.	ԲՆԱԿԱՐԱՆԸ ՎԵՐԱՆՈՐՈԳԵԼՈՒ ՀԱՄԱՐ ՏՐԱՄԱԴՐՎՈՂ ՎԱՐԿԵՐ .....	
4.	ԱՎՏՈՄԵՔԵՆԱ ՁԵՌՔ ԲԵՐԵԼՈՒ ՀԱՄԱՐ ՏՐԱՄԱԴՐՎՈՂ ՎԱՐԿԵՐ .....	
5.	ՔԱՐՏԱՅԻՆ ՎԱՐԿԵՐ .....	
6.	ԱՅԼ ԴՐՈՒՅԹՆԵՐ .....	6


 <b>ԱՐՄՎԻՍԲԱՆԿ</b> ՓՐԱՅՎԻՑ & ԻՆՎԵՍՏԱՆԸՑ ԲԵՆԹԻՆԳ	<b>Բանկի աշխատակիցներին վարկերի տրամադրման կարգ</b>		
	Տարբերակ՝ 8.0	Կարգավիճակը՝ հաստատված	Ամսաթիվ՝ 02.02.2018թ.

## 1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

- 1.1. Սույն կարգով սահմանվում են «ԱՐՄՎԻՍԲԱՆԿ» ՓԲԸ-ի (այսուհետ՝ «Բանկ») աշխատակիցներին, այդ թվում՝ ղեկավարներին, տրամադրվող արտոնյալ վարկերի տեսակները, տրամադրման պայմանները և ընթացակարգը: Սույն կարգի պայմանները չեն տարածվում այն վարկերի վրա, որոնք տրամադրվում են համաձայն տվյալ վարկատեսակի համար գործող ուղենիշային/ընդհանուր պայմանների: Հղիության և ծննդաբերության, ինչպես նաև մինչև 3 տարեկան երեխայի խնամքի համար տրամադրվող արձակուրդում գտնվող աշխատակիցներին, ինչպես նաև փորձնակներին սույն կարգով վարկեր չեն տրամադրվում:
- 1.2. Սույն կարգի իմաստով ղեկավար են համարվում «Բանկերի և բանկային գործունեության մասին» ՀՀ օրենքով սահմանված ղեկավարները:
- 1.3. Բանկը աշխատակիցներին վարկեր տրամադրելիս ղեկավարվում է ՀՀ օրենսդրությամբ, Բանկի կանոնադրությամբ, Բանկի վարկային քաղաքականությամբ, սույն կարգով և Բանկի ներքին այլ ակտերով:
- 1.4. Բանկի աշխատակիցներին վարկերը տրամադրվում են ՀՀ դրամով կամ արտարժույթով:
- 1.5. Բանկի Խորհրդի նախագահին, Խորհրդի անդամներին, Գործադիր տնօրենին վարկ տրամադրելու վերաբերյալ որոշումը կայացնում է Բանկի Խորհուրդը:
- 1.6. Սույն Կարգի 1.5. կետում չնշված Բանկի աշխատակիցներին բնակարան ձեռք բերելու և/կամ վերանորոգելու, բնակելի տուն կառուցելու նպատակով հողամաս ձեռք բերելու և/կամ բնակելի տուն կառուցելու, ինչպես նաև ավտոմեքենա ձեռք բերելու նպատակով վարկ տրամադրելու վերաբերյալ որոշումը կայացնում է Վարկային կոմիտեն: Բանկում 3 տարուց պակաս աշխատած աշխատակիցների վարկերը հաստատվում են բացառության կարգով՝ նախապես ստանալով Գործադիր տնօրենի թույլտվությունը, ով նման որոշում է կայացնում հաշվի առնելով աշխատակցի աշխատանքի արդյունավետությունը, նրա աշխատանքային գործունեությունից Բանկի ստացած օգուտները, Բանկի խնդիրների լուծմանն ուղղված նրա գործունեության ակտիվությունը, բանկային համակարգում տվյալ բանկի կանոնադրությամբ նախատեսված խնդիրների և/կամ նպատակների իրականացման հետ կապված աշխատանքային ստաժի երկարատևությունը և ուշադրության արժանի այլ հանգամանքներ: Սույն կարգի 5-րդ գլխին համատասխան սպառողական վարկ/վարկային գիծ (այսուհետ՝ «քարտային վարկեր») տրամադրելու վերաբերյալ որոշումը կայացնում է Բանկի Գործադիր տնօրենը:
- 1.7. Բանկի աշխատակիցներին տրամադրվող վարկերի տեսակներն են.
  - բնակարան ձեռք բերելու (ներառյալ նաև նշված գույքերի գնման իրավունքի ձեռքբերման ֆինանսավորումը), բնակելի տուն կառուցելու նպատակով հողամաս ձեռք բերելու և/կամ բնակելի տուն կառուցելու համար տրամադրվող վարկեր,
  - բնակարանը/բնակելի տունը վերանորոգելու համար տրամադրվող վարկեր (այդ թվում նաև՝ չվերականգնվող վարկային գծեր),
  - ավտոմեքենա ձեռք բերելու համար տրամադրվող վարկեր,
  - քարտային վարկեր:


 <b>ԱՐՄԱՎԻՍԲԱՆԿ</b> ԹՐԱՅՎԻՑ & ԻՆՎԵՍՏԱՆԸՑ ԲԵՆԹԻՆԳ	<b>Բանկի աշխատակիցներին վարկերի տրամադրման կարգ</b>		
	Տարբերակ՝ 8.0	Կարգավիճակը՝ հաստատված	Ամսաթիվ՝ 02.02.2018թ.

- 1.8. Սույն կարգի իմաստով բնակարան է համարվում նաև առանձնատունը և այգետնակը, իսկ սույն կարգի 3-րդ գլխի պայմաններով վարկավորման պարագայում, բնակարան կարող է համարվել ինչպես աշխատակցի միանձնյա/մասնակի սեփականությունը համարվող բնակարանը, այնպես էլ աշխատակցի փաստացի բնակության վայրը, անկախ տվյալ բնակարանի նկատմամբ սեփականության/օգտագործման իրավունքների գրանցված լինելու պարագայից:
- 1.9. Սույն կարգի իմաստով բնակարանը համարվում է.
- **նոր**, եթե դրա շահագործման հանձնման ամսաթվից մինչև աշխատակցի կողմից բնակարանի ձեռքբերման նպատակով ներկայացրած վարկի ստացման հայտի ներկայացման ամսաթիվն ընկած ժամանակահատվածը հավասար է կամ չի գերազանցում 10 (տասը) տարին,
  - **հին**, եթե դրա շահագործման հանձնման ամսաթվից մինչև աշխատակցի կողմից բնակարանի ձեռքբերման նպատակով ներկայացրած վարկի ստացման հայտի ներկայացման ամսաթիվն ընկած ժամանակահատվածը գերազանցում է 10 (տասը) տարին:
- 1.10. Բնակարանի շահագործման ամսաթիվը որոշվում է բնակարանի ձեռքբերման վարկի ստացման հայտ ներկայացրած աշխատակցի տրամադրած փաստաթղթային հիմքերի հիման վրա կամ անկախ գնահատողի կողմից:
- 1.11. Սույն կարգի 2-րդ, 3-րդ և 4-րդ գլուխներով սահմանված վարկերը կարող են տրամադրվել նաև արդեն կատարված ծախսերը փոխհատուցելու, այդ թվում՝ այլ ֆինանսական հաստատություններից ստացված վարկերը վերաֆինանսավորելու նպատակով:
- 1.12. Բանկի աշխատակիցներն իրավունք ունեն, առանց որևէ տույժ կամ տուգանք վճարելու, Բանկից ստացված վարկերը ժամկետից շուտ մարել:
- 1.13. Բանկի աշխատակցին տրամադրված սույն կարգով նախատեսված յուրաքանչյուր վարկի ամսական մարումները (ներառյալ տոկոսագումարները) չեն կարող գերազանցել աշխատակցի ամսական զուտ աշխատավարձի 40 (քառասուն) %-ը:
- 1.14. Բանկի աշխատակցին տրամադրված սույն կարգով նախատեսված բոլոր վարկերի ամսական մարումների (ներառյալ տոկոսագումարների) հանրագումարը չի կարող գերազանցել աշխատակցի ամսական զուտ աշխատավարձի 60 (վաթսուն) %-ը: Տվյալ ցուցանիշի հաշվարկի մեջ ներառվում է նաև այլ բանկերում աշխատակցի ունեցած վարկերի մարումները: Բացառիկ դեպքերում, երբ այլ բանկերի վարկերը սպասարկվում են աշխատակցի այլ եկամուտների կամ ընտանիքի անդամների եկամուտների հաշվին, վարկային կոմիտեի թույլտվությամբ կարող են հաշվի առնվել նաև այդ եկամուտները: Վերականգնվող վարկային գծերի և օվերդրաֆթների/վարկային քարտերի դեպքում տվյալ վարկի ամսական մարման հաշվարկի հիմքում ներառվում է միայն տվյալ սահմանաչափի առավելագույն տոկոսը:
- 1.15. Բանկի աշխատակիցներին տրամադրվող վարկերի դիմաց հաշվարկվող տարեկան տոկոսադրույքը սահմանվում է.
- 1.15.1. Սույն կարգի 2-րդ, 3-րդ և 4-րդ գլուխներում սահմանված վարկերի համար.
- Եթե վարկը տրամադրվում է ԱՀՀ, ԲԵ կամ նմանատիպ այլ մասնագիտացված ծրագրով, ապա՝ տվյալ ծրագրի ռեսուրսի ինքնարժեքով,

 <b>ԱՐՄՎԻՐԱՆԿ</b> ՓՐԱՅՎԻՑ & ԻՆՎԵՍՏԱՆԸ ԲԵՆԵԻՆԳ	<b>Բանկի աշխատակիցներին վարկերի տրամադրման կարգ</b>		
	Տարբերակ՝ 8.0	Կարգավիճակը՝ հաստատված	Ամսաթիվ՝ 02.02.2018թ.


- Եթե վարկը տրամադրվում է Բանկի սեփական միջոցների հաշվին, ապա՝ Բանկի երկարաժամկետ դրամային ռեսուրսի ինքնարժեքով աշխատակցի Բանկում աշխատանքի երրորդ տարին լրանալուց հետո Բանկի աշխատակցի դիմումով՝ Վարկային կոմիտեի դրական որոշման առկայության դեպքում, Բանկի Գործադիր տնօրենի և աշխատակցի միջև կարող է կնքվել համաձայնագիր, որով Վարկային պայմանագրով սահմանված տոկոսները համապատասխանեցվում են աշխատանքի համապատասխան ստաժ ունեցող աշխատակիցներին տրամադրվող վարկերի տոկոսներին:

- 1.15.2. Սույն կարգի 5-րդ գլխում սահմանված վարկերի համար՝ աշխատակցի կողմից վարկային հայտը ներկայացնելու օրվա դրությամբ գործող ՀՀ կենտրոնական բանկի կողմից սահմանված բանկային տոկոսի հաշվարկային դրույքի չափով:
- 1.16. Սույն կարգի 1.15.1 կետով սահմանված տոկոսներից ցածր տոկոսադրույքներ կարող են սահմանվել Տնօրինության ներկայացմամբ՝ Խորհրդի որոշմամբ:
- 1.17. Տրամադրվող քարտային վարկի ժամկետը չի կարող գերազանցել աշխատակցի աշխատանքային պայմանագրի վերջնաժամկետը, իսկ բացառությունները սահմանվում են Գործադիր տնօրենի կողմից:
- 1.18. Բանկի աշխատակցի կողմից տրված վարկային հայտը, մինչև վարկը հաստատող մարմնի քննարկմանը ներկայացնելը, պետք է նշագրվի (համաձայնեցվի) աշխատակցի ստորաբաժանման ղեկավարի և վարկային ստորաբաժանման ղեկավարի կողմից: Աշխատակցի ղեկավարը հայտը նշագրելով հաստատում է, որ նպատակահարմար է գտնում վարկի տրամադրումը և տվյալ պահի դրությամբ նա տեղյակ չէ վարկի վերադարձելիությանը խոչընդոտող որևիցե հանգամանքի վերաբերյալ: Վարկավորման ստորաբաժանման ղեկավարը հայտը նշագրելով հաստատում է, որ հայտը համապատասխանում է Բանկի վարկային քաղաքականության և սույն կարգի պահանջներին:
- 1.19. Բանկի աշխատակիցներին վարկեր տրամադրելու հետ կապված բոլոր ծախսերը (մասնավորապես՝ գրավի առարկայի գնահատման, պայմանագրերի նոտարական վավերացման, պետական գրանցման և այլն ծախսեր) կատարվում է աշխատակցի կողմից:
- 1.20. Եթե աշխատակիցն ազատվում է աշխատանքից և այդ պահին ունի Բանկից ստացված վարկ (վարկեր), և եթե աշխատանքից ազատավող աշխատակցի համար ավելի նպաստավոր տոկոսադրույք չի սահմանվում Բանկի իրավասու մարմնի կողմից, և/կամ Բանկի ու աշխատակցի միջև այլ համաձայնություն ձեռք չի բերվում, ապա.
  - 1.20.1. սույն կարգի 2-րդ, 3-րդ և 4-րդ գլուխներով սահմանված կարգով ստացած վարկի (վարկերի) մնացորդի վրա հաշվարկվող տոկոսադրույքը աշխատակցի աշխատանքից ազատվելու օրվանից մինչև վարկի մարումը փոփոխվում և համապատասխանեցվում է տվյալ վարկատեսակների (վարկերի) մասով այլ հաճախորդների համար սահմանված ուղենիշային/հիմնական պայմանների դրույքաչափին,
  - 1.20.2. սույն կարգի 5-րդ գլխում սահմանված կարգով ստացած վարկի գումարը աշխատակիցը պարտավոր է ամբողջությամբ մարել:

 <b>ԱՐՄԱՎԻՍԲԱՆԿ</b> ԹՐԱՅՎԻՑ & ԻՆՎԵՍՏԱՆԸՔ ԲԵՆԹԻՆԳ	<b>Բանկի աշխատակիցներին վարկերի տրամադրման կարգ</b>		
	Տարբերակ՝ 8.0	Կարգավիճակը՝ հաստատված	Ամսաթիվ՝ 02.02.2018թ.

**2. ԲՆԱԿԱՐԱՆ ՁԵՌՔ ԲԵՐԵԼՈՒ, ԲՆԱԿԵԼԻ ՏՈՒՆ ԿԱՌՈՒՑԵԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ ՀՈՂԱՄԱՍ ՁԵՌՔ ԲԵՐԵԼՈՒ ԵՎ/ԿԱՍ ԲՆԱԿԵԼԻ ՏՈՒՆ ԿԱՌՈՒՑԵԼՈՒ ՀՄԱՐ ՏՐԱՄԱԴՐՎՈՂ ՎԱՐԿԵՐ**

- 2.1. Բանկի աշխատակիցներին սույն կարգի պահանջներին համապատասխան բնակարան ձեռք բերելու համար կարող են տրամադրվել.
- մինչև 20 (քսան) տարի մարման ժամկետով վարկեր նոր բնակարանների ձեռքբերման, բնակելի տուն կառուցելու նպատակով հողամասի ձեռք բերման և/կամ բնակելի տան կառուցման դեպքերում,
  - մինչև 15 (տասնհինգ) տարի մարման ժամկետով վարկեր հին բնակարանների ձեռքբերման դեպքերում:
- 2.2. Բնակարան ձեռք բերելու, բնակելի տուն կառուցելու նպատակով հողամաս ձեռք բերելու և/կամ բնակելի տուն կառուցելու համար վարկերը տրամադրվում են հետևյալ ընթացակարգով.
- աշխատակիցը ներկայացնում է վարկի տրամադրման հայտ՝ Բանկի կողմից սահմանված ձևով և կարգով,
  - վարկային հայտը քննարկվում է Բանկի Վարկային կոմիտեի նիստում և նպատակահարմարության դեպքում կայացվում է վարկի տրամադրման որոշում, բացառությամբ այն դեպքերի, երբ վարկի տրամադրման որոշումը պետք է կայացվի Բանկի Խորհրդի կողմից,
  - այն դեպքերում, երբ վարկի տրամադրման որոշումը կայացվում է Բանկի Խորհրդի կողմից, ապա Վարկային կոմիտեն Խորհրդին ներկայացնում է վարկի տրամադրման վերաբերյալ եզրակացություն,
  - բնակարանի ձեռքբերման, բնակելի տուն կառուցելու նպատակով հողամասի ձեռք բերման և/կամ բնակելի տան կառուցման նպատակով տրամադրվող վարկերի դեպքում, վարկի ապահովման միջոց են հանդիսանում ձեռք բերվող բնակարանը, բնակելի տուն կառուցելու նպատակով ձեռք բերված հողամասը և/կամ կառուցված բնակելի տունը և տվյալ աշխատակցի ամուսնու երաշխավորությունը,
  - Բանկի աշխատակցին վարկը տրամադրվում է տվյալ բնակարանի, բնակելի տուն կառուցելու նպատակով տվյալ հողամասի և/կամ կառուցվող բնակելի տան արժեքի առավելագույնը 80%-ի չափով կամ գնվող բնակարանի, բնակելի տուն կառուցելու նպատակով գնվող հողամասի առքուվաճառքի իրական գնի և/կամ կառուցվող բնակելի տան իրական արժեքի չափով ամբողջությամբ, եթե աշխատակցի կողմից որպես ապահովման միջոց գրավադրվում է Բանկի համար ընդունելի լրացուցիչ այլ գրավ, պայմանով, որ տրամադրվող վարկի գումարը չի կարող գերազանցել տվյալ վարկի ապահովման միջոց հանդիսացող ամբողջ գրավի գնահատված արժեքի 80% սահմանաչափը: Գույքի գնահատված և փաստացի ձեռքբերման արժեքների տարբերության դեպքում հիմք է ընդունվում դրանցից նվազագույնը:


 <b>ԱՐՄԱՎԻՍԲԱՆԿ</b> ՓՐԱՅՎԻՑ & ԻՆՎԵՍՏԱՆԸ ԲԵՆԵԻՆԳ	<b>Բանկի աշխատակիցներին վարկերի տրամադրման կարգ</b>		
	Տարբերակ՝ 8.0	Կարգավիճակը՝ հաստատված	Ամսաթիվ՝ 02.02.2018թ.

### **3. ԲՆԱԿԱՐԱՆԸ ՎԵՐԱՆՈՐՈԳԵԼՈՒ ՀԱՄԱՐ ՏՐԱՄԱԴՐՎՈՂ ՎԱՐԿԵՐ**

- 3.1. Բանկի աշխատակիցներին սույն կարգի պահանջներին համապատասխան բնակարանը վերանորոգելու համար կարող են տրամադրվել մինչև 10 (տասը) տարի մարման ժամկետով վարկեր:
- 3.2. Բնակարանը վերանորոգելու համար վարկերը տրամադրվում են հետևյալ ընթացակարգով.
  - աշխատակիցը ներկայացնում է վարկի տրամադրման հայտ՝ Բանկի կողմից սահմանված ձևով և կարգով, ինչպես նաև իր կողմից կազմված վերանորոգման համար անհրաժեշտ ծախսումների նախահաշիվը,
  - վարկային հայտը և աշխատակցի կողմից կազմված ծախսումների նախահաշիվը քննարկվում է Բանկի վարկային կոմիտեի նիստում և նպատակահարմարության դեպքում կայացվում է վարկի տրամադրման որոշում, բացառությամբ այն դեպքերի, երբ վարկի տրամադրման որոշումը պետք է կայացվի Բանկի Խորհրդի կողմից,
  - այն դեպքերում, երբ վարկի տրամադրման որոշումը կայացվում է Բանկի Խորհրդի կողմից, ապա Վարկային կոմիտեն Խորհրդին ներկայացնում է վարկի տրամադրման վերաբերյալ եզրակացություն,
  - բնակարանի վերանորոգման նպատակով տրամադրվող վարկերի դեպքում, վարկի ապահովման միջոց են հանդիսանում վերանորոգվող բնակարանը և տվյալ աշխատակցի ամուսնու, ինչպես նաև բնակարանի սեփականատիրոջ(տերերի) երաշխավորությունը,
  - բնակարանի վերանորոգման համար վարկը տրամադրվում է առավելագույնը աշխատակցի կողմից ներկայացված նախահաշիվում նշված, վերանորոգման համար անհրաժեշտ ծախսումների հանրագումարի չափով՝ բայց բնակարանի գնահատված արժեքի 50 (հիսուն) %-ից ոչ ավելի:

### **4. ԱՎՏՈՄԵՔԵՆԱ ՁԵՌՔ ԲԵՐԵԼՈՒ ՀԱՄԱՐ ՏՐԱՄԱԴՐՎՈՂ ՎԱՐԿԵՐ**

- 4.1. Բանկի աշխատակիցներին սույն կարգի պահանջներին համապատասխան ավտոմեքենա ձեռք բերելու համար կարող են տրամադրվել մինչև 5 (հինգ) տարի մարման ժամկետով վարկեր: Աշխատակիցը սեփական միջոցներից վճարում է առնվազն 10% կանխավճար՝ ավտոսրահից ձեռք բերելու դեպքում, և 20%՝ երկրորդային շուկայից:
- 4.2. Ավտոմեքենա ձեռք բերելու համար վարկերը տրամադրվում են հետևյալ ընթացակարգով.
  - աշխատակիցը ներկայացնում է վարկի տրամադրման հայտ՝ Բանկի կողմից սահմանված ձևով և կարգով,
  - վարկային հայտը քննարկվում է Բանկի վարկային կոմիտեի նիստում և նպատակահարմարության դեպքում կայացվում է վարկի տրամադրման որոշում, բացառությամբ այն դեպքերի, երբ վարկի տրամադրման որոշումը պետք է կայացվի Բանկի Խորհրդի կողմից,

 <b>ԱՐՄԱՎԻՍԲԱՆԿ</b> ՓՐԱՅՎԻԹ & ԻՆՎԵՍՏԱՆԸՔ ԲԵՆԹԻՆԳ	<b>Բանկի աշխատակիցներին վարկերի տրամադրման կարգ</b>		
	Տարբերակ՝ 8.0	Կարգավիճակը՝ հաստատված	Ամսաթիվ՝ 02.02.2018թ.

- այն դեպքում, երբ վարկի տրամադրման որոշումը կայացվում է Բանկի Խորհրդի կողմից, ապա Վարկային կոմիտեն Խորհրդին ներկայացնում է վարկի տրամադրման վերաբերյալ եզրակացություն,
  - ավտոմեքենա ձեռք բերելու նպատակով տրամադրվող վարկերի դեպքում, վարկի ապահովման միջոց են հանդիսանում ձեռք բերվող ավտոմեքենան և տվյալ աշխատակցի ամուսնու երաշխավորությունը,
  - Բանկի աշխատակցին վարկը տրամադրվում է առավելագույնը տվյալ ավտոմեքենայի ձեռքբերման իրական արժեքի (ներառյալ տեղավորման և մաքսագերծման ծախսերը) 80% չափով, սակայն ոչ ավել ավտոմեքենայի գնահատված արժեքի 80% (բացառությամբ ավտոսրահից ավտոմեքենա ձեռք բերելու դեպքերը):
- 4.3. Գրավադրվող ավտոմեքենան պարտադիր ապահովագրվում է, ընդ որում, համապատասխան վկայագիրը պետք է ներկայացվի մինչև վարկի տրամադրումը, իսկ անհնարինության դեպքում, ապահովագրությունն իրականացնում է Բանկը, իսկ աշխատակիցը նախապես իր բանկային հաշվին պետք է ապահովի 1 տարվա ապահովագրավճարի չափին համապատասխան գումարի առկայությունը, որից էլ Բանկը հետագայում կկատարի գանձումը:

## **5. ՔԱՆՏԱՅԻՆ ՎԱՐԿԵՐ**

- 5.1. Բանկի աշխատակիցներին սույն կարգի պահանջներին համապատասխան կարող են տրամադրվել քարտային վարկային գծեր սպառողական նպատակներով, եթե աշխատակիցը վարկային հայտի ներկայացման օրվա դրությամբ Բանկում աշխատել է.
- առնվազն 6 (վեց) ամիս՝ մինչև զուտ աշխատավարձի չափով և մինչև 12 (տասներկու) ամիս մարման ժամկետով.
  - առնվազն 12 (տասներկու) ամիս՝ մինչև զուտ աշխատավարձի կրկնապատիկի չափով և մինչև 24 (քսանչորս) ամիս մարման ժամկետով.
  - առնվազն 36 (երեսունվեց) ամիս՝ մինչև զուտ աշխատավարձի եռապատիկի չափով և մինչև 36 (երեսունվեց) ամիս մարման ժամկետով:
- 5.2. Քարտային վարկային գծերը տրամադրվում են հետևյալ ընթացակարգով.
- աշխատակիցը ներկայացնում է քարտային վարկի ստացման հայտ՝ անմիջական դեկավարի մակագրությամբ Բանկի կողմից սահմանված ձևով և կարգով,
  - Գործադիր տնօրենը քարտային վարկի ստացման հայտը մակագրում է՝ հանձնարարելով համապատասխան ստորաբաժանմանը ձևակերպել տրամադրվելիք վարկը, եթե հայտը բավարարում է սույն կարգի պահանջներին:
- 5.3. Տրամադրվող քարտային վարկերի ապահովման միջոց են հանդիսանում աշխատակցի դրամական հոսքերը:

## **6. ԱՅԼ ԴՐՈՒՅԹՆԵՐ**

- 6.1. Սույն կարգով նախատեսված վարկերը տրամադրվում են ամսական մարումների գրաֆիկով՝ մինչև 3 (երեք) ամիս վարկի մայր գումարից մասնակի մարումների իրականացման



 <b>ԱՐՄՎԻՐԱՆԿ</b> ՓՐԱՅՎԻՑ & ԻՆՎԵՍՏԱՆԸ ԲԵՆԵՐԼՁ	<b>Բանկի աշխատակիցներին վարկերի տրամադրման կարգ</b>		
	Տարբերակ՝ 8.0	Կարգավիճակը՝ հաստատված	Ամսաթիվ՝ 02.02.2018թ.

արտոնյալ ժամանակաշրջանով (բացառությամբ քարտային վարկերի, որոնց մարման յուրահատկությունները սահմանվում են բանկի Տնօրինության կողմից):

- 6.2. Սույն կարգի պահանջներին համապատասխան վարկ ստանալու հնարավորություն ունեցող աշխատակիցներին մինչև սույն կարգն ուժի մեջ մտնելը տրամադրված (այդ թվում նաև Խորհրդի կողմից տրամադրված) վարկերի պայմանները կարող են վերանայվել Վարկային կոմիտեի կողմից: Սույն կետը չի տարածվում Գործադիր տնօրենի կողմից տրամադրված վարկերի վրա:
- 6.3. Սույն կարգի պահանջներին համապատասխանելը, ինչպես նաև առանց վարկային կոմիտեի նախնական հավանության՝ սույն կարգի 2-րդ, 3-րդ և 4-րդ գլուխներով սահմանված վարկի ստացման ակնկալիքով, որոշակի գործողություններ և ծախսեր կատատարելը հիմք չէ աշխատակցի կողմից Բանկից համապատասխան վարկի տրամադրում պահանջելու, իսկ Բանկի կողմից՝ վարկը տրամադրելու համար: